ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

PATRIARCHE SUPREME
CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS

№ 751. Ս. Էջմիածին 14 . Դեկտեմբեր 1992 . թ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՆԵՐՔԻՆ ՍՓԻՒՌՔԻ ԹԵՄԱԿԱՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ 1989-1992 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ա. ԹԵՄԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ.-

Մայր Հայրենիքում օրինական նոր պայմանների ստեղծումով ու մանանանդ Հայաստանի Հանրապետութեան ,,Խղճի ազատութեան,, օրէնքի հիման վրայ Մայր Աթոռիս Գերագոյն Հոգևոր Խորհուրդը և Եպիսկոպոսական Ժողովը խմբագրեցին ,,Ներքին թեմերի եկեղեցական կանոնագրութիւն,, , որ հաստատումովը Ամենայն Հայոց Կաթողիկոսի, հրապարակուեց 1991-ին, նպատակ ունենալով վերակազմակերպել՝ Հայաստանի և Ներքին Սփիւռքի տարածքի վրայ՝ Հայ Առաքելական Եկեղեցու կանոնական ու վարչական կեանքը համաձայն եկեղեցական աւանդական կարգ ու կանոնի:

Սոյն ներքին կանոնագրութիւնը կիրառուելու է շուրջ երեք տարիների փորձի շրջանում, որից յետոյ ենթարկուելու է վերանայման, անհրաժեշտ լրացումներ ու փոփոխութիւններ կատարելու համար:

Կանոնագրութեան հիման վրայ արդէն գրեթէ ամբողջապէս կազմակերպուած են մեր ներքին թեմերը ըստ հետևեալ դրութեան.

1. Սուրբ Էջմիածնի Մայրավանքը և նրա ուղղակի ենթակայ՝ Ս.Հռիփսիմէ Ս. Գայանէ, Ս. Շողակաթ, Ս. Աստուածածին 4 եկեղեցիները, 3 եպիսկոպոսներով, 15 կուսակրօն և սարկաւագ միաբաններով ու 20 քահանաներով:

2. Մայր Աթոռին ուղղակի ենթակայ, Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցին ու Ս. Գեղարդայ և Սև Խոր Վիրապի վանքերը, 8 հոգևորականներով:

3. Արարատեան Հայրապետական թեմը, առաջնորդական փոխանորդով՝

Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսեան ... 1 վանքով և 33 եկեղեցիներով՝ 39 հոգևորականներով:

4. Շիրակի թեմ, առաջնորդ Տ. Գրիգորիս արք. Բունիաթեան: 1 վանքով և 6 եկեղեցիներով՝ 21 հոգևորականներով:

5. Գուգարաց թեմ՝ առաջնորդ Տ. Արսէն արք. Պէրպէրեան: 5 վանքերով, 2 եկեղեցիներով՝ 6 հոգևորականներով:

digitised by A.R.A.R.@

6. Սիւնեաց Թեմ՝ առաջնորդ Տ. Ասողիկ եպս. Արիստակէսեան: 3 վանքերով և 6 եկեղեցիներով՝ 7 հոգևորականներով:

7. Արցախի Թեմ՝ առաջնորդ Տ. Պարգև եպս. Մարտիրոսեան: 2 վանքեր և 3 եկեղեցիներ՝ 4 հոգևորականներով:

8. Վիրահայոց Թեմ՝ առաջնորդ Տ. Գէորգ եպս. Սերայդարեան: 4 եկեղեցիներ՝ 6 հոգևորականներով:

9. Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմ՝ առաջնորդ Տ. Տիրան եպիսկոպոս Կիւրեղեան: 16 եկեղեցիներ՝ 12 հոգևորականներով:

10. Ուկրաինայի շրջան՝ առաջնորդական տեղապահ Տ. Նաթան վարդապետ Յովհաննիսեան: 2 եկեղեցիներ՝ 2 հոգևորականներով:

11. Մոլտավիոյ հովութիւն: 1 եկեղեցի՝ 1 հոգևորականով:

Ընդհանուր թիւ՝ վանքեր՝ 16, եկեղեցիներ՝ 77, հոգևորականներ՝ 145:

Բ. ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՐՈԶՉՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ինչպէս քաջ յայտնի է, սովետական կարգերի հաստատումից յետոյ մինչև 1930 թուականը, գրեթէ բոլոր հայոց եկեղեցիները փակուել էին Հայաստանում: Արցախում, ուր մինչև 1928 թուականը գործում էին 18 վանքեր և 105 եկեղեցիներ ու միութեան տարբեր հանրապետութիւններում, ոմանք քանդուել էին, շատերը վերածուել ակումբների և պահեստների, իսկ պատմական վանքերը՝ անխնամ վիճակում պահպանուել էին որպես պատմական յուշարձաններ: Ամէն կրօնական գործունէութիւն արգելուած էր: Պատերազմից յետոյ միայն արտօնուեցին գործել փոքրաթիւ եկեղեցիներ և վերանորոգման ենթարկել պատմական վանքեր: Սովետական կարգերի տակ եկեղեցին ու հոգևորականութիւնը հալածուած էին պետական վարչական միջոցներով, իսկ պատերազմից յետոյ՝ լոկ հանդուրժուած, սահմանափակ իրաւունքներով: Կրօնը և եկեղեցին նկատւում էին մահացած հաստատութիւններ:

Մայր Աթոռս յառաջիկայ տարի հրատարակելու է յատուկ մի ուսումնասիրութիւն Հայաստանեայց Եկեղեցու և հայ հոգևորականութեան կրած հալածանքների մասին, նոր յայտնաբերուած արխիւային փաստաթղթերի հիման վրայ:

Վերոյիշեալ պայմաններում, մեր հայրենաբնակ ժողովուրդը և նոր սերունդները մնացին զուրկ կրօնական դաստիարակչութիւնից և հոգևոր մխիթարութիւնից:

digitised by A.R.A.R.@

Մեր օրերին մեր Եկեղեցու առաջ դրուեց մեր ժողովրդի կեանքն ու հոգին սուրբ Աւետարանի լոյսով պայծառակերպելու նուիրական պարտականութիւնը, առաւել լայն չափերով:

1990 թուականից սկսած մեր թեմերում տակաւ առ տակաւ կազմակերպուեցին եկեղեցասէր միութիւններ, կրօնասէր Տիկնանց միութիւններ, մանկական կրօնական երգչախմբեր և պարախմբեր: Իսկ վերջին երկու տարիների ընթացքում Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ, Արարատեան Թեմի առաջնորդարանում և Էջմիածին քաղաքում կազմակերպուեցին կանոնաւոր կրօնական առարկաների դասախօսութիւններ,/շաբաթը երկու անգամ երեկոյան ժամերին/, որին հետևեցին աւելի քան հարիւր յիսուն հանրային վարժարանների ուսուցիչ-ուսուցչուհիներ, որոնք մի քանի ամիսներ առաջ յետ քննութիւնների, ստացան վկայականներ, իրաւունք ունենալու պետական վարժարաններում կրօնական առարկաներ աւանդելու: Նման դասընթացքներ շարունակուելու են նաև այս տարի և յառաջիկայ տարիներին, թէ Երևանում և թէ միւս թեմերում:

Մայր Աթոռս, կրօնական քարոզչութեան նպատակով, 1990 թուականից սկսած կազմակերպել է կրօնական քարոզների հաղորդաշար Երևանի հեռուստացոյցից, ամէն շաբաթ երեկոյ ,,Խորան Լուսոյ,, անուան տակ:

Արժան է նաև յիշել, որ Հայաստանում և մասամբ ներքին թեմերում, կազմակերպուել են շուրջ 23 քրիստոնէական դաստիարակչութեան միօրեայ դպրոցներ:

Կրօնական դասաւանդութեանց և քարոզչութեան գործունէութեան առաւել ծաւալման ու կազմակերպեալ ընթացք տալու նպատակով, Մայր Աթոռում հաստատուելու է յատուկ բաժին ,,Եկեղեցական քարոզչութեան կենտրոն,, անուան տակ, որը պիտի ղեկավարուի հինգ եպիսկոպոսներից բաղկացած մի վարչութեամբ, որին մասնակցելու են Կ. Պոլսի Պատրիարքութեան և Գանատայի Թեմի ներկայացուցիչ սրբազան հայրերը:

Ինչպէս հաստատում էր Վեհափառ Հայրապետը իր 28 Օգոստոս 1992 թուակիր կոնդակով, ցաւով պէտք է յայտնենք, որ մեր Եկեղեցու հոգևորականների թիւը չափազանց սահմանափակ լինելով, զրկուած ենք Հայաստանի և ներքին սփիւռքի կրօնական կարիքները լրիւ բաւարարելուց: Մեր Եկեղեցին կարիք ունի այսօր առնուազն ևս շուրջ հարիւր պատրաստուած ու եռանդուն եկեղեցականների, վարդապետ և քահանայ, որոնք նուիրուէն հոգևոր ազգային ծառայութեան՝ անսակարկ կերպով:

Աւետարանի քարոզութեամբ՝ հունձքը առատ է, սակայն մշակները սակաւ: Առնուազն հինգ տարի պէտք է սպասել, որպէսզի մեր ծեմարանը նոր սերունդներ կարողանայ պատրաստել: Այդ աշխատանքը կատարուում է և յոյս ունենք, որ մօտ ապագայում մեր Եկեղեցին կ'օժտուի ծեռնհաս հոգևորականներով, բաւարար չափով:

digitised by A.R.A.R.@

Մինչ այդ, Եկեղեցին իր այժմեան ուժերով իրագործում է հնարաւորը:

Գ. ՀՈԳԵՒՈՐ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Կրօնական ազատութեան պայմաններում նոր թափ ստացաւ նաև Մայր Աթոռիս եկեղեցական կրթական առաքելութիւնը, կրօնաւորների նոր սերունդներ պատրաստելու առաջադրանքով: Այսօր գործում են՝ Սուրբ Էջմիածնի Հոգևոր ծեմարանը՝ 90 ուսանողներով, Արարատեան թեմի դպրանոցը՝ Սևանայ կղզու վրայ՝ 21 ուսանողներով և Շիրակի թեմի ընծայարանը՝ Գիւմրի քաղաքում՝ 12 ուսանողներով:

Սուրբ Էջմիածնի Հոգևոր ծեմարանում և միւս երկու դպրանոցներում տեղի են ունենում կանոնաւոր ամէնօրեայ դասաւանդութիւններ՝ համաձայն մեր կրթական ծրագրերի, աւանդելով կրօնական, աստուածաբանական առարկաներ, հայագիտական, պատմական և փիլիսոփայական առարկաներ, ծիսակատարութիւն, երաժշտութիւն և օտար լեզուներ, ռուսերէն և անգլերէն:

Հայագիտական, պատմագիտական և փիլիսոփայական առարկաների համար, Երևանից հրաւիրուած են համալսարանի մասնագէտ դասախօսներ: Կրօնագիտական և աստուածաբանական առարկաները աւանդում են մեր հոգևորականները:

Սուրբ Էջմիածնի Հոգևոր ծեմարանի տնօրէնն է Տ. Անանիա եպիսկոպոս վերատեսչութեամբ Տ. Ներսէս արքեպիսկոպոսի:

Դ. ՕԳՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԱՂԷՏԵԱԼՆԵՐԻՆ, ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԵՒ ԲՌՆԱԳԱՂԹԱԾՆԵՐԻՆ

Շիրակի տարածքի վրայ տեղի ունեցած ահարկու երկրաշարժից յետոյ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ 1988-ից սկսած Մայր Աթոռս և ներքին թեմերը, յատկապէս Արարատեան, Շիրակի և Ռուսաստանի ու Արցախի մեր եկեղեցական թեմերը, կազմակերպեցին լայնածաւալ աշխատանքներ օգնութիւններ փութացնելով աղէտեալներին, որբերին, նաև Սումգայիթից, Կիրովապատից և Բազուից փախստականներին, և Արցախի մարտնչող ժողովրդի կարիքներին:

Ստորև տալիս ենք պատկերը դրամական օգնութիւնների՝ համաձայն Մայր Աթոռիս Ֆինանսական բաժնի տուեալների:

1988թ. մարտ ամսից մինչև 1992թ. Մայր Աթոռի կողմից նուիրաբերուել են ներքոյիշեալ դրամական օգնութիւնները մեծ մասամբ զոյացած արտասահմանից նուէր ստացուած գումարներից:

digitised by A.R.A.R.@

1988-1989թթ.

1. Ադրբեջանից բռնազաղթուածներ և Արցախ	3.080,000 ռուբլի.
2. Երկրաշարժից տուժածներ /աղէտեալների Ֆոնդ/	1.052.000 ,,
3. Բազմազաւակ մայրեր	373.000 ,,
4. Այլ բնոյթի օժանդակութիւններ	284.000 ,,
/Այդ թուականի սակով, սոյն գումարը հաւասար էր 599.000 դոլլարի/	4.789.000 ռուբլի

1990թ.

1. Ադրբեջանից բռնազաղթուածներ և Արցախ	2.630.000 ռուբլի
2. Երկրաշարժից տուժածներ /աղէտեալների Ֆոնդ/	447.000 ,,
3. Բազմազաւակ մայրեր	164.000 ,,
4. Այլ բնոյթի օժանդակութիւններ	619.000 ,,
/Այդ թուականի սակով, սոյն գումարը հաւասար էր 257.000 դոլլարի/	3.860.000 ռուբլի

1991թ.

1. Ադրբեջանից բռնազաղթուածներ և Արցախ	454.000 ռուբլի
2. Երկրաշարժից տուժածներ /աղէտեալների Ֆոնդ/	827.000 ,,
3. Բազմազաւակ մայրեր	126.000 ,,
4. Այլ բնոյթի օժանդակութիւններ	628.000 ,,
/Այդ թուականի սակով, սոյն գումարը հաւասար էր 68.000 դոլլարի-	2.035.000 ռուբլի:

1992թ.

1. Ադրբեջանից բռնազաղթուածներ և Արցախ	2.130.000 ռուբլի
2. Երկրաշարժից տուժածներ /աղէտեալների Ֆոնդ/	5.241.000 ,,
3. Բազմազաւակ մայրեր	112.000 ,,
4. Այլ բնոյթի օժանդակութիւններ	817.000 ,,
/Այդ թուականի սակով, սոյն գումարը հաւասար էր 553.000 դոլլարի/	8.300.000 ռուբլի

digitised by A.R.A.R.@

1989-1991 թուականի, արտասահմանից վերոյիշեալ օգնութիւնների մէջ, մասնաւոր յիշատակութեան արժանի ենք գտնում առատաձեռն գումարային նուիրատուութիւնները՝ Ռուսաց Սրբազան Պատրիարքից՝ մէկ միլիոն ռուբլին, 1989-ին, Հռոմի Սրբազան Պապի՝ մէկ հարիւր հազար տոլլարը, Աթէնքի Յունաց արքեպիսկոպոսից՝ վաթսուն հազար տոլլարը, Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան՝ երեք հարիւր քսան հազար տոլլարը, Պրազայի Կաթողիկէ արքեպիսկոպոսից՝ երկու հարիւր յիսունվեց հազար ռուբլին, Լվովի կրօնական համայնքից՝ հարիւր հազար ռուբլին, Միացեալ Նահանգներից Տ. Մեսրոպ արքեպ.Աշճեան միջոցով 1989-199-ին ստացուած 8.500.000 ռուբլին և զանազան կրօնական այլ կազմակերպութիւններից ու անձանցից՝ 457.000 ռուբլին:

Նաև՝

1.	Cor unum - Հռոմից	100.000	տոլլար
2.	Տիաքոնիա - Շվեդիա	150.000	,,
3.	Քէոլնի հայ համայնքից	91.000	,,
4.	Հայ Ամերիկեան օգնութեան - Նիւ-Եորք	45.000	,,
5.	Հայ Կրթական միութիւն-Լոս Անջելոս	25.000	,,
6.	Էլվին Յակոբեան - ԱՄՆ	132.000	,,
7.	Armenian Relief Fund	50.000	,,
8.	Armenian Missionary Association	50.000	,,
9.	Neu wied - Germany	32.000	,,
10.	Ջորջ Քիւրքճեան	15.600	,,
11.	Ս. Խաչ Դպրեվանք միութիւն-Նիւ Եորք	11.000	,,
12.	Հայ Ազգ. հիւանդանոց և միութիւն-Պոստոն	11.700	,,
13.	Եւ այլ հայ ու օտար կազմակերպութիւններից և անհատներից	666.000	,,

Վերևում յիշուած բոլոր նուիրատուութիւններից զոյացած ընդհանուր գումարը եղել է՝ 1.959.000 ամերիկեան դոլլար, որը իր ժամանակին հաղորդուել էր մամուլին /Հրատարակուած էր նաև՝Էջմիածին,, ամսագրում և Փարիզի ,,Յառաջ,, թերթում/:

Խորին գոհունակութեամբ ենք արձանագրում նաև 1.200.000 /մէկ միլիոն երկու հարիւր հազար/ տոլլարի նուիրաբերումը Ժընևի Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի, տրամադրուած Մայր Աթոռիս, յատկապէս եկեղեցաշինական ծրագրերի իրագործմանը Հայաստանում:

Ստորև ներկայացնում ենք նաև Մայր Աթոռիս տնտեսական բաժնի տուեալները՝ 1988թ. դեկտեմբերից մինչև 1992թ. հոկտեմբերը ներառեալ, արտասահմանից Մայր Աթոռ նուէր ստացուած և բաշխուած ապրանքների՝ սննդամթերքի, հագուստեղէնի, դեղօրայքի, անկողնային պարագաների և այլ զանազան իրերի՝ նշուած քանակութեամբ:

digitised by A.R.A.R.@

Ուրեմն՝ 1988թ. դեկտեմբեր ամսից սկսած Հայաստանի հիւսիսային շրջաններում տեղի ունեցած երկրաշարժից յետոյ Հայ Առաքելական Եկեղեցու հացէով ստացուել են ներքոյիշեալ քանակութեամբ ապրանքները և բաժանուել իր ժամանակին աղէտեալներին:

1.	Ամերիկայի Միացեալ նահանգներից	1193	տոննա.
2.	Գերմանիայից	943	,,
3.	Իտալիայից	440	,,
4.	Լեհաստանից /Կաթոլիկ եկեղեցու կողմից/	300	,,
5.	Շվեյցարիայից /Կարմիր Խաչ/	290	,,
6.	Ֆրանսիայից /Կարմիր Խաչ և Լիոնի հայ համայնք/	248	,,
7.	Թուրքիայից /պոլսահայեր/ Հայոց Պատրիարքարան	176	,,
8.	Հոլանդիայից	43	,,
9.	Սիրիայից /հայ համայնքից/	66	,,
10.	Արգենտինայից /հայ համայնքից/	44	,,
11.	Հունգարիայից /Կաթոլիկ Եկեղեցի/	47	,,
12.	Անգլիայից /հայ համայնքից/	51	,,
13.	Պորտուգալիայից /Կիլիկիայի Կաթոլիկեան հիմնարկութիւնից/	38	,,
14.	Բրազիլիայից /հայ համայնքից/	22	,,
15.	Յորդանանից /հայ համայնքից/	26	,,
16.	Ավստրիայից	15	,,
17.	Կիպրոսից /հայ համայնքից/	16	,,
18.	Ռումինիայից /հայ համայնքից/	10	,,
19.	Եգիպտոսից / ,, ,, /	4	,,
20.	Ուրուգվայից ,, ,,	1	,,
21.	Բուլղարիայից ,, ,,	1	,,
22.	Բելգիայից ,, ,,	1	,,
23.	Կանադայից ,, ,,	1	
24.	Այլ երկրներից	6	
		3980	տոննա

Վերոյիշեալ ապրանքները բաշխուել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջոցով, Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի նշանակած Յանձնաժողովների կողմից:

Բացի վերևում նշուած ապրանքներից, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջոցով ԱՄՆ-ից և Գերմանիայից ստացուած շինարարական սարքաւորումներով և նիւթերով կառուցուել են՝ 100 տուն և 2 մանկապարտէզ աղէտի գոտում, նաև ատաղձագործական մի գործարան Գերմանական ,,Դիականիշես Վերք,, եկեղեցական կազմակերպութեան օգնութեամբ: Իսկ Ստեփանաւան քաղաքում կառուցուել են 6 շէնք, 96 բնակարանով ԱՄՆ-ի Արևելեան թեմի Հայ Առաքելական Եկեղեցու հանգանակած գումարներով: Կառուցուել է նաև մի ղպրոցի շէնք ԱՄՆ-ի հայոց Արևմտեան թեմի առաջնորդարանի միջոցներով:

Խորին գոհունակութեամբ ենք արձանագրում նաև՝ 1990թ.-ից սկսած և մինչև օրս շարունակուող՝ պարբերաբար յոյժ կարևոր նիւթական օժանդակութիւնները՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան կողմից, նպաստեր Արարատեան թեմի եկեղեցաշինական և կրօնական քարոզչութեան իրագործումների օգտին: Իսկ ԱՄՆ-ի Արևելեան թեմից 1992-ին առաքուած է Շիրակի թեմի միջոցաւ, 960 տոննա սննդամթերք աղետեալներին:

digitised by A.R.A.R.@

ե. Երախտապարտ սրտով կամենում ենք արձանագրել նաև, որ վերջին երեք տարիների ընթացքում, մեծաքանակ օգնություններ են ստացել Մայր Աթոռիս միջոցով, դեղօրայք, հագուստեղէն, սննդամթերք՝ արտասահմանեան Հայ Եկեղեցու թեմական կենտրոններից՝ Միացեալ Նահանգներից, Գանատայից, Հարաւային Ամերիկայից, Անգլիայից / Aid Armenia /, Ֆրանսիայից /Սոս Արմենիա/, Ստամբուլից /Պատրիարքարան/, որոնք բաժանուել են մեր եկեղեցիների և պետական յանձնաժողովների միջոցով:

Նոյն տարիներին Մայր Աթոռում մեծաքանակ սննդամթերք է ստացուել Եւրոպայի քոյր Եկեղեցիների կողմից, յատկապէս Գերմանիայից ,,Դիաքոնիշխաներ,, և ,,Քարիտաս,, կրօնական կազմակերպութիւնների կողմից, որոնք բաժանուել են աղէտի գոտու, սահմանամերձ շրջանների և Արցախի կարիքաւորներին, վերոյիշեալ կազմակերպութիւնների ներկայացուցիչների հսկողութեան ներքոյ:

զ. 1989-91 տարիներին Մոսկուայում և Ռուսաստանի այլ քաղաքներում ապաստանած բազմահազար փախստական ընտանիքներին՝ Սումգայիթից, Բաքուից և Կիրովապատից, մեծաքանակ օգնություններ է կազմակերպել նաև Հայ Եկեղեցու Ռուսաստանի թեմի առաջնորդարանը, յատկապէս սննդամթերք և հագուստեղէն ու դրամական օգնութիւն, ստացուած Ռուսաստանի հայերից և արտասահմանի քոյր Եկեղեցիներից ու բարեսիրական կազմակերպութիւններից:

Ստորև ներկայացնում ենք ամփոփումը այդ օգնությունների՝ համաձայն Ռուսաստանի հայոց Մոսկուայի թեմական առաջնորդ՝ Տ. Տիրան եպիսկոպոս Նիւրեղյանի հաղորդած տուեալների՝

1. 1988 - 1989 ..... 636.000 ռուբ.
2. 1990 - 1991 ..... 1.420.000 ,,
Ընդամենը 2.056.000 ռուբ.
3. 1989 - 1991 - թուականներին՝ Փարիզի ՍՕՍ Արմենիի կողմից առաքուած հագուստեղէն շուրջ .... 16 տոննա
- Ժընևի ՍՕՍ Արմենիից ստացուած հագուստեղէն ..... 20 ,,
- Աւստրիայից, Գերմանիայից և Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդից ստացուած սննդամթերք ... 12 ,,

digitised by A.R.A.R.@

Է. Վերջին չորս տարիների ընթացքում Մայր Աթոռիս մասնաւոր ուշադրութեան առարկան է հանդիսացել Արցախի ժողովրդի հոգևոր կարիքների բաւարարումը և աղետեալներին օգնություններ հասցնելու մարդասիրական գործը: Ստորև ներկայացնում ենք Արցախի Հայ Եկեղեցու գործունէության ամփոփ պատկերը, ըստ թեմական Առաջնորդ Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսեանի հաղորդած տուեալների:

Արցախի թեմում երեք տարուայ ընթացքում կատարուել են հետևեալ աշխատանքները: Ամբողջովին վերանորոգուել են Խնածախ, Բալուջա, Ներքին Հոռաթաղ, Գիւլիստան, Վերին Շէն, Հայ Բորիս գիւղերի եկեղեցիները, մասամբ՝ Մարտակերտի շրջկեդրոնի սբ. Կարապետ, Գանձասար և Ամարաս վանքերը, ինչպէս նաև Շուշի քաղաքի սբ. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին: Կառուցուել են երկու երկյարկանի երիցատներ՝ Խնածախ և Ներքին Հոռաթաղ գիւղերում:

Ստեղծուել են հինգ քառաձայն երգչախմբեր և մէկ՝ երկձայն մանկական: Մարտակերտի շրջկեդրոնում հիմնել ենք Եկեղեցասիրաց Միութիւն և երկու կիրակնօրեայ դպրոցներ: Լայնածաւալ քարոզչական և դաստիարակչական աշխատանք է տարուել Ստեփանակերտի մանկապարտէզներում, որի մանուկները բազմիցս հանդէս են եկել հոգևոր համերգներով և հոգևոր թեմաներով բեմադրութեամբ:

Մանկաւարժական ինստիրուտում, հմր. 8 դպրոցում և բուժուսումնարանում երկտարուայ դասախօսութիւններ է տրուել Հայ Եկեղեցու պատմութեան ու դաւանանքի վերաբերեալ:

Լայն կերպով քարոզչութեան համար օգտագործել ենք և շարունակում ենք օգտագործել տեղական թերթերը, ռատիոն և հեռուստատեսութիւնը:

1992-ին Ստեփանակերտ քաղաքում հիմնուել է Մարտակերտի Եկեղեցասիրաց Միութեան մասնաճիւղը, որի ուժերի հետ մէկտեղ, ինչպէս նաև ,,Գթութիւն''-ի երեք աշխատակիցների հետ միասնաբար խնամում ենք 39 ծեր կանանց ու տղամարդկանց, հիմնելով Ստեփանակերտում ,,Խնամատուն'':

Արդէն հինգ ամիս է, ինչ թեմի խնամքի տակ է գտնուում Արցաքում ռմբակոծութեան պատճառով Երևանում ժամանակաւոր ապաստան գտած 67 կին ու երեխայ: Եկեղեցի չունենալու պատճառով Ստեփանակերտ քաղաքում ստիպուած ենք եղել թատրոնի սրահներից մէկը օգտագործել ամէն կիրակի պատարագ մատուցելու համար, հոգալով տեղի հաւատացեալների կարիքները: Միւս սրահում շաբաթուայ երեք օրը օգտագործում ենք որպէս դպրանոց, ուր պատրաստում ենք թեմի համար դպրաց և սարկաւագաց դասը, որտեղ նաև նոյն օրերին տրւում է կրօնական ու հոգևոր երաժշտութեան ուսուցում հաւատացեալ համայնքին:

1991-ին Արցախի թեմը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անմիջական օրհնութեամբ հիմնել է հրատարակչութիւն ,,Գանձասար'' հանդէս անունով, որն էլ առ այսօր հրատարակել է ութ գրքոյկ և շարունակում է իր հրատարակչական գործունէութիւնը

Վաթսուն տարուայ դադարից յետոյ Հայրապետի կարգադրութեամբ ու օրհնութեամբ 1989- աշնանը վերաբացուեցին Արցախում չորս եկեղեցիներ՝ Գանձասարի վանքի սբ. Յովհաննէս Մկրտիչ, Ամարաս վանքի սբ. Գրիգորիս, Խնածախ գիւղի սբ. Աստուածածին, Ներքին Հոռաթաղ գիւղի սբ. Աստուածածին: Շահումեանի

digitised by A.R.A.R.@

շրջանում վերանորոգումներից յետոյ վերոյիշեալ երեք եկեղեցիների վերաբացումից առաջ այդ շրջանը, ինչպէս նաև Մարտակերտի շրջանի տարածքի 70 տոկոսը անցաւ աղրբեջանի բանակի հսկողութեան տակ, որի պատճառով մենք զրկուեցինք նաև գործող ներքին Հոռաթաղ գիւղի եկեղեցուց: Նման պատճառով այսօր մենք զուրկ ենք նաև Ամարաս վանքից, որը գտնւում է գրեթէ բուն սահմանի և կրակոցների գօտում:

Այսօր գործում են Գանձասարի վանքը, Խնածախի սբ. Աստուածածին եկեղեցի, պատարագներ է մատուցւում ամէն կիրակի Ստեփանակերտում և Յունուար ամսից կը վերաբացուի Շուշի քաղաքի սբ. Յովհաննէս եկեղեցին, ուր նաև կը հիմնուի նոյն ամսից փոքր հոգևոր կլինիկայ իր բարեգործական դեղատնով, որի նման օրինակը ունեցել ենք Մարտակերտի շրջկեդրոնում:

Այս երեք տարուայ ընթացքում, գտնուելով պատերազմական վիճակում, պարտաւոր ենք եղել հոգալու բանակի հոգևոր կարիքները և ակտիւ քարոզչական գործունէութիւն ծաւալել մեր համեստ ուժերով Արցախի բանակում, նոյնիսկ նշանակելով բանակի հոգևոր կապելան: Այսօր ստիպուած ենք նոյնիսկ ընդլայնել մեր ծառայութիւնը այս ոլորտում:

Արցախի թեմը նաև մարդասիրական օգնութիւն է հասցրել պայքարող Արցախցիներին, ինչը ստորև ներկայացնում ենք Ձերդ Վեհափառութեանը:

1989 - 1990 տարիներին Մայր Աթոռից ստացուած 1.200.000 ռուբլով և այլ նուիրատուներից ստացուած գումարներով կատարուած են հետևեալ օգնութիւնները՝

		1990 թ.	1991 թ.	1992 թ.
1	Բազմազաւակ մայրերին	19.367 ռ.	6.150 ռ.	200.000 ռ.
2	Աղրբեջանից գաղթածներին	133.010 ռ.	1.000.000	53.000 ռ.
3.	Զոհուածների ընտանիքներին	26.000 ռ.	2.400 ռ.	2.500 ռ.
4.	Սահմանամերձ գօտու գիւղերին	108.850 ռ.	30.000 ռ.	1.801.270 ռ.
5.	Գիւղական դպրոցներին	23.500 ռ.	5.685 ռ.	-
6.	Այլ զանազան օգնութիւններ	5.000 ռ.	10.150 ռ.	-
	Ընդամենը	316.527 ռ.	1.054.385 ռ.	2.056.770 ռ.
	Ընդհանուր գումարով	3.427.682 ռուբլի		

digitised by A.R.A.R.@

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և քաջալերանքով, ներկայ տարույս ընթացքում, բացառիկ դրամական մարդասիրական օգնություններ են առաքուել աւելի քան վեց միլիոն տոլլարի՝ Միացեալ Նահանգաց մեր երկու թեմերից՝ Տ. Վաչէ և Տ. Խաժակ սրբազանների ջանքերով՝ յօգուտ Արցախի բնակչութեան կարիքների, Հայաստանի պետական իշխանութեանց միջոցով: Նաև Միացեալ Նահանգների Արևելեան թեմի սրբազան առաջնորդի միջնորդութեամբ, Միացեալ Նահանգաց կառավարութիւնը, Հայաստանի կարիքաւոր բնակչութեանը տրամադրել է տասնհինգ միլիոն տոլլարի արժողութեամբ սննդամթերք, որը բաժանուել և շարունակում է բաժանուել Նիւ Եորքի հայոց առաջնորդարանի ներկայացուցիչների ու պետական յանձնաժողովների միջոցով: Նաև Գանատայի առաջնորդ Տ. Յովնան սրբազանը՝ Գիւմրի աղէտեալ քաղաքի աւելի քան ութ հարիւր որբ երեխաներին պարբերաբար դրամական օգնութիւն է առաքում և նիւթապէս կարևոր չափով մշտապէս օժանդակում ,,Խրիմեան Հայրիկի,, անուան վարժարանի կարիքներին:

Վերջին չորս տարիներին վերևում յիշատակուած օգնությունների տուեալների շարքում հաւանական է, որ մոռացուած տուեալներ լինեն: Այդ պարագային խնդրում ենք, որ մեզ յիշեցուեն դրանք, ամբողջացնելու համար մեր ցուցակները:

Պարտք ենք համարում այստեղ ընդգծել թէ վերոյիշեալ բոլոր տուեալները վերաբերում են այն օգնություններին, որոնք կատարուել են ու իրագործուել մեր Եկեղեցու՝ Մայր Աթոռիս միջոցով: Այլապէս մեր եկեղեցիների արտասահմանեան թեմերից և համայնքներից շատերը կատարել են մեծագումար օժանդակություններ և կարևոր շինարարական իրագործումներ, նաև ուղղակի մեր երկրի պետական կամ քաղաքային իշխանութեանց միջոցով, ինչպէս օրինակ, Միացեալ Նահանգաց մեր թեմական կենտրոնները, Պրիտանահայ համայնքը / Aid Armenia/, Ֆրանսահայ համայնքը /Սոս Արմենի/ և ուրիշներ:

Բ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, ինքը ևս, վերջին երկու տարիների ընթացքում նիւթապէս ուղղակի օժանդակել է Արցախի մեր եղբայրների և քոյրերի կարիքներին, արտասահմանում գտնուող իր ունեցուածքից, տրամադրելով 2.100.000 /երկու միլիոն հարիւր հազար/տոլլար, իսկ ,,Հայաստան Հիմնադրամին՝ 1.000.000 /մէկ միլիոն/ տոլլար:

Այսպիսով, Մայր Աթոռս, վերջին երեսունհինգ տարիների ընթացքում իրականացրած իր ունեցուածքի մօտաւորապէս կէսը նուիրաբերել է վերոյիշեալ կարիքների օգտին Հայաստանի պետական իշխանութեանց միջոցով: Մնացած գումարը գտնուում է ի պահ Կաթողիկոսարանիս անունով Ժընևի Union de Banques Suisses դրամատան մէջ, անձեռնմխելի, տոկոսները տրամադրելի Մայր

digitised by A.R.A.R.@

Աթոռիս եկեղեցաշինական ծրագրերի իրագործման համար:

Ժ. Վեհափառ Հայրապետի հրամանով, շուրջ ութ տարիներ առաջ, Երևան Մատենադարանի և Հոգևոր ծեմարանի գրաքարագէտ 12 դասախօսներ սկսեցին ամբողջ Սուրբ Գրքի նոր թարգմանութիւնը արևելահայերէն, նոր ուղղագրութեամբ: Աշխատանքը լրիւ աւարտուել էր 1991 թուականին, պատրաստ տպագրութեան, երբ Նորին Սրբութիւնը անհրաժեշտ համարեց և կարգադրեց, որ այն վերափոխուի դասական ուղղագրութեան:

Այս աշխատանքը ծեռնհասութեամբ կատարում են Հոգևոր ծեմարանի հայոց լեզուի ու գրաքարի երկու մասնագէտ դասախօսներ: Նախատեսնուած է այն իր աւարտին հասցնել 1993-ի աշնանը: Հրատարակութիւնը բարեսիրաբար յանձն է առել կատարել Աստուածաշնչական Միացեալ կազմակերպութիւնը՝ 100.000 տպաքանակով:

ՀՈԳԵՒՈՐ ԾԵՄԱՐԱՆ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1992
Ս. Էջմիածին

digitised by A.R.A.R.@